

Հարանել, Ղմանայեւ Արրահամ կաթնուղիկոսն իւր «Թուղթ շրջագայական» ի մէջ յայտնապէս կը յիշատակէ թէ Վերք եւ Աղուանք քաղկեզոնի կողմէն էին, եւ թէ իւր նախորդք Աղուանից թղթեր, գրած էին այս նկատմամբ. «Ես աջադոյն քան զմեզ կացեալքն յաստիճանի կաթնուղիկոսութեան՝ յԱղուանս, իսկ մէք ի Վերս առ Վերուլն (գրեցաք)», ինքն ալ բացարձակապէս կ'արգելու որեւիցէ Հաղորդութեան անոնց հետ, «նոյն հրաման եւ վասն Աղուանիցն անշարժ կայցէ, զի պատկառեալ զարձցին ի թիւր (!) ճանապարհէն»¹

Անտարակոյս այս իսկ պատճառ եղած է Վերթանիսի ձեռնագրութիւնն Աղուանից, նոյն ժամանակ ճշմարտամիտ, քաղկեզոնի Ս. Հուսառով Զարարիա Բ կաթնուղիկոսէն առնելու, թե՛րեւս Պետրոսի խորհրդով, որուն աշակերտած էր երբեմն: Այսպիսի նորանշան պատահարքի մը անհնարին չէ յետագայից բերանը հազարուակի մեկութիւն ստանալու: Եղիկեք հարեանցի ալ, որ այս զէպքերս — Սիւնեաց բաժանութեան եւ Աւետարանաց նշխարաց փոխադրութիւնը, — այլեւայլ կերպով կ'առնուին ձեռագրաց մէջ, համեմատել ի միջի այլոց Անանիա կաթնուղիկոսին թուղթը² եւ հռչակաւորն Սողոմոնի Մաքենոցաց վանահօր այս առթիւ պատմածը:³

(Ըրբնաւիւթի)

* Ն. Ա.



Պ Ա Յ Մ Ա Վ Ա Ն

ՆԵՐՍԵՍԻԱՆԻՊՈՒՍՈՅ ԱՌԻԿՆՈՒԹԻՄՈՒՆՆ ԿՐԹՈՒ ՅՐԵՆԱԳՆԵՐ ԵՎՆԵՐԻՄՈՅ ՓՐՈՒՄՆ ԸՌԸՆՆ ԿՐԹՈՒՆ

Ինչպէս գիտեմք՝ Եղիսաբեթուպոլսոյ քաղաքային վարչութիւնը ի սկզբանէ հետէ շատ մտադիր էր, որ քաղաքին մէջ խաղաղութիւնն

նաց եւ թէ «Քաղկեզոնականաց» սեռաններն նշանակուած են, որոնցմէ յիշարիտ մին կամ միւս կրնայ ըլլալ. եթէ նետարարանները կ'ընդունէին ապա զ'«Քաղկեզոնական» ներք, պիտի մեթէին եւ կամ ընդ հակառակը:

¹ Գրեք թղթոց, էջ 194:
² Մարտի 1898—71: Հմմտ. եւ Մաշտոցի առ Յեր Գեորգ կաթնուղիկոս թուղթն, ուր բառական յառաջ կը բերուի կաղանկատուացոյցն խաղկեզոնի: Արարող 1902, էջ 751:
³ Արգելեան՝ Ամանիա Քարգամանի, եւս, էջ ԺԲ, Ծած. 2, եւ Ազատեանիցերս եւ իւր բազմազարեան գաղափարք, էջ 200—1, ուր յառաջ կը բերուի կարգ մը, որ բառ առ բառ համեմայն է կաղանկատուացոյցն. բայց զժամանակս հաստատան անորոշապէս ի մէջ չէ բերուած, որ լայս կրնար սփռել մեր խնդրոյն նկատմամբ:

եւ կարգ ու կանոն պահուին — Ասոնց նկատմամբ, այլեւայլ ժամանակ այլեւայլ կարգադրութիւններ եղած են: — Առ այս կը Հային նաեւ 1831ին, ոստիկանութեան առաջնորդին առջեւը գրուած հրահանգներն, որ ժամանակը նկատելով՝ բարձր քաղաքակրթութիւն ու մեծ յառաջդրմութիւն կը ցուցնեն:

Ասոնց մէջ կը կարգադրուի ի մէջ այլոց. որ ոստիկանութեան վերատեսուչն՝ սակն տուած եւ իրեն առջեւ ելլելի սակն խնդիրներուն վրայք արձանագրութիւն շինէ, թէ՛ իր առեւձին գիտութեանն ու թէ՛ քաղաքային խորհրդին համար: — Պարսաւաթղիներ տարածող, պատիւը նուստացընող, իր առաջնորդներուն զէմ՝ ծանր յանցանքներ զնոյններն՝ անմիջապէս քաղաքաբաշխութեան ծանուցուին: Ու որպէս զի առ անկարգութիւններն աւելի շուտով երեւան ելլեն, տանպետներու ձեռքը սակն տան տիրող իմացընէ, որ եթէ ասանկ բանք գիտեն, շուտ մը ոստիկանութեան ծանուցանեն, որ ինք դատաւորին հետ անոր առջեւն առնու: — Եղիցոց, ՀայՏոյսիք, սուտ երդում ընել արգելուած է: Զայնպիսիներն, առանց անձի զանազանութեան զիւրցանելու է առաջնորդութեան: — Գիշերային պահապանները ժամերը ծանուցանելէն զատ. հսկելու են ստահակներու եւ գողերու վրայ. զանոնք ձեռք բերեն եւ մինչեւ առտու պահակապանութեան տուը պահեն: — Կասկածաւոր, առանց վկայականի մարդիկ, ընդունուելու չեն քաղաքը — մինչեւ որ յայտնի չըլլայ թէ ինչ վիճակի մարդիկ են: Պանդակապաններն՝ ասանկները, տանպետներուն եւ ոստիկանութեան վերատեսչին ծանուցանելու են: Եկամուտ արհեստաւորներն ալ քաղաք չեն կրնար տեղաւորուիլ, մինչեւ որ քաղաքաբաշխութեան, իրենց արհեստը բանեցնելու հրաման ընդունին: — Գինետաններու եւ ինչեւաններու մէջ, գիշերը միայն՝ մինչեւ ժամը 10 կրնայ զբօսանք ըլլալ: — Պատահելի կրակներուն առջեւն առնելու համար, տանպետները նայելու են, որ վաւարաններու մօտ կամ տանիքներու մէջ գիւրավատ բանք չգտնուին: Օտար մուրացիները՝ քաղաք չեն կրնար ողորմութիւն խնդրել: Կեղեակ մուրացիները զսպուելու, բռնուելու են: Քաղաքացի եղողներուն մուրալու հրաման կայ միայն ուրբաթ օրերը: Փողոցներու վրայ, ինչեւաններու մէջ, վայնասուն ընողները, կուսարարները՝ բռնուին եւ յանցանքնուն համեմատ պատժուին: Խշուտց հանողները, մանաւանդ գիշերները՝

մտադիր ըլլուին, եթէ մտիկ չեն ըներ՝ բռնուին: — Լրացան, ասորձանակ պարպել արգելեալ է: Դուրս առնելու է անանկ դէպքերն ուր որ հարկաւոր է կատարել անասունները զարնելու համար: Գեղացիներուն, ասանց վկայականի վտառք, գնդակ ծախել չըլլար: — Փողոցի մէջ կամ հրապարակի վրայ ստակ գտնողը պարտական է ոստիկանութեան տանելու: Չըողը կը պատժուի: — Գնչուներուն եւ աստանդական մարդիկներուն սպարանք ծախել արգելուած է: Դարուոր կահագործ ցուցնելու են, թէ ինչ սպարանք կը ծախեն եւ ուսկից առած են: Կասկածաւոր մարդէ, անձնաթի պարանք գնել չըլլար: — Ատող միս ծախելու է մահատուութեանց մէջ: Սպառելի նիւթերը՝ միայն վաճառանոց ու հրապարակ կրնան ծախուիլ: Անոնք՝ որ քաղքէն դուրս ասանկ բաներ կը գնեն, որպէս զի ետքէն աւելի սուղ ծախեն, այն գնուած բանն իրենցմէ պէտք է ստնուլ: — Շատ խտաւր կը պահանջուի օրինաւոր շափ ու կշիւ գործածելու: Ասոր դէմ ընողները կը պատժուին, այնու որ 12 ֆորթն պատիժ կրելէն վատ, շափն ու կշիւն իրենցմէ կ'առնուի: — Խոզերը, հորթները, գաւառները՝ հօտը իրկուելու կամ սխուռ պահուելու են: Եթէ մէկուն անասունը մարդու մը փնաս կ'ընէ, անոր տէրը պատասխանատու է փնասն համար: — Ընները՝ գիշերները հաջելով, մանուանդ հիւանդաց, ուսանողաց ու գործող պաշտօնատեալաց շատ անհանգստութիւն կը պատճառեն: Ուստի զատուց զարնել, մեղքներու է: Հրապարակին ու փողոցներուն մաքրութեանը վրայ պէտք է հսկել: Ընդերն ու աղտոեղութիւններն անկէ հեռացուելու են: Կարեացիները՝ գիշեր եւ մանուանդ ցուրտ ատեն դուրս կրուելու եւ փոսի մէջ գրուելու են: Ստակած անասուններն, իրենց սրտած տեղը տանելու եւ հոն խորանկ տեղ փորելով՝ թողուելու են, եւ այլն: Ահա՛ աս կարգադրութեանց հայերէն թարգմանութիւնը:

Եղբարեթեմուպոլսու ազատ թագաւորական քաղքին ոստիկանութեան վերատեսչին համար կարգադրութիւններ:

Դրանսիլուանից մեծ իշխանութեան մեծապատիւ թագաւորական վերին տեսչութեան խորհրդին — առաջիկայ 1831 տարւոյն յունուոր 4ին — կարգադրութեամբն եւ հաստատութեամբը՝ յաջորդ անային կանոնները արուեցան, զանոնք հրատարակելու, ճշգիւ պահելու եւ անոնք համեմատ գործելու համար:

1. Ոստիկանապետը՝ թէ ան կարգադրութիւններուն նկատմամբ զորոնք ինք ըրած է, թէ իրեն առջեւ գալի գանգաւորներուն եւ թէ իր ներքեւն եղած սասնակներն իրեն առջեւ գրուելի եւ խնդիր ըլլուելի նիւթոց վրայք մասնաւոր արձանագրութիւն ունենալով, ամէն բան հասկընալի կերպով գրի անցընելու եւ այս արձանագրութիւնը՝ երբ քաղաքային խորհուրդն իրմէն խնդրէ հունգարներէն լեզուով անոր ներկայացընելու պարտական է: — Իր պաշտօնը կորսնցընելու վտանգաւ՝ այն արձանագրութիւնը քաղաքաբաշխութեան դիւանը զետեղելու է, որպէս զի մարդ անկէ կարենայ տեսնել թէ ինչպէս կը տանի, տարու ու կատարեց ասոր նկատմամբ ունեցած պարտականութիւնը:

2. Ընդ տեսնելը կամ իմանան, որ մէկը պարտական գրութիւններ (pasquillus) կը ցրուէ, կը տարածէ, կամ մէկուն պատիւը նուազընող խօսքեր կը հրատարակէ, կամ զմէկը՝ աչքի զարնող յանցանքի մը ներքեւ ինկած — կամ քաղաքաբաշխութեան եւ իր առաջնորդներուն դէմ եւ ուրիշ ասոր նման, հատարակաց ընկերութեան համար փաստապարպակութիւններ պարտականող բաներ կը լսէ՝ զայնպիսիները, ոստիկանապետն, ասանց անձի զանազանութեան կամ առանց աչք գոցելու — վերին կտաւվարութեան 1830ին տուած կարգադրութեանը համեմատ — հետազօտելու եւ անոր օրպիտութեանը նկատմամբ առանց ուշանալու՝ քաղաքաբաշխութեան ծանուցում ընելու է: Եթէ աս բանս յայտաղում չի կրեր, անմիջապէս դատաւորին ծանուցանելու եւ անոնց վրայք ընելի կարգադրութիւնները գործադրելու պարտական է: — Ասոր նկատմամբ

3. Որպէս զի ասանկ անկարգութիւններն աւելի շուտով յայտնուին եւ ստուգուին, փողոցներու տասնպետաց ձեռքք ամէն ամս սիրող՝ շրջաբերական թղթով յառաջուրնէն պատուէր տրուելու է, որ եթէ օրեւիցէ մէկն իրենցմէ վերն ըլլած գրութիւններէն բան մ'իմանայ կամ սպահովապէս գիտնայ, անմիջապէս առանց ձայն հանելու, գաղտնի (որովհետեւ բառին անունը յայտնուելու չէ) պարտական է ծանուցանելու ոստիկանութեան վերատեսչին: Որ գլխաւոր դատաւորին հետ՝ բանը հանդարտութեամբ, առանց մէկու մը պատուոյն զպղծելու, ետեւէն ինչայ՝ երեւան հանելու ով պէ աս բանս ընելու անհոգ ըլլայ, յանցանքին արժանիքին համեմատ, երեք հունգարական ֆիորի-

նով կամ երեք օրան բանտարգելութեամբ պիտի պատժուի: — Նմանապէս, եթէ որ աւելի ծանրակէիս բաներու մէջ, ասոնց համար (connivens) գտնուի բանը քննութեան տակ առնելու, եւ ըստ որպիսութեան անձին պատժելու է: — Ուրիշ կողմանէ, 1829 յուճիս 30ին, ինչպէս նաեւ 1830 յունիս 21ին, վերին կառավարութեան ստոր նկատմամբ քաղաքային խորհրդին տուած եւ վաւերացուած կարգադրութիւններն, իրբեւ կանոն առնուին:

4. Երկրին օրէնքներուն եւ բարձրագոյն հրամաններուն համեմատ յիշոց, ՏայՏայպեւ եւ սուտ երբում ընդերքը խախու սանձահարուելու են, եւ այսպիսինբը՝ պատժելու համար, տեղական խորհրդին ձեռքը տրուելու են: Ուստի պարտաւորութիւն կը գրուի, թէ՛ ստիկանութեան վերատեսչին աւ թէ՛ տանպետաց վրայ որ զայսպիսիններն, րուցք անձի զանազանութեան զեկուցանելու անփոյթ ըլլան:

5. Որովհետեւ ան լաւ սովորութիւնն, այս քաղքին մէջ ալ կայ, որ գիշերային պահանորդներ կը պահուին վճարքով, որոնք հարկ է որ մինչեւ առտու, չէ՛ թէ միայն ժամբը բարձրագոյն կանչեն, հապա նաեւ պարտական են առ այն, որ շրջահայեցութեամբ փողոցներու վրայ ստանդական ստահաններուն, գողերուն եւ շարագործներուն վրայ հսկեն, զանոնք ձեռք բերեն եւ ստիկանութեան վերատեսչին տանին յանձնեն, որպէս զի հոն մինչեւ առտու պահպանուին: Եթէ ասոնցմէ մէկն իր պարտաւորութիւնը կատարելու անփոյթ ըլլայ, նախ տասընպետներէն՝ վեց գաւազան ընդունին, եթէ որ ասկից ետքն ալ չճնազանգին, ստիկանութեան վերատեսչին ամբաստանուին եւ տասուերկու գաւազան ընդունին: Իսկ եւրոպոյ անգամ, իրենց ծառայութեանէն մերժուին:

6. Եթէ որ կասկածաւոր, անծանօթ եւ աստանդական մարդիկ, առանց վկայականի շրջագային, այնպիսինբը բռնուին եւ փակուած մնան, մինչեւ որ յայտնի ըլլայ թէ ինչ վիճակի մարդիկ են: Ասանկներու տեղ շտրուի, ոչ մասնաւորաց աներուն եւ ոչ պանդոկներուն եւ իջնաններուն մէջ, հապա տանտերերն ու պանդոկպետները տանպետներու ձեռքը անմիջապէս ստիկանութեան վերատեսչին զեկուցում ընեն: — Ով որ աս բանս ընելու անփոյթ ըլլայ, երեք հուսկարական ֆիրդինի պատիժ ընդունի: — Եթէ անծանօթ եւ օտար մարդը, պատահի որ պանդոկի կամ առանձնական տան տիրոջ մը երթայ բնակելու,

տանտերն, աս անծանօթին անունն եւ ուր տեղաց ըլլալը տեղեկանալու է ու տառնպետներու — եւ ասոնք՝ անմիջապէս ստիկանութեան վերատեսչին տեղեկութիւն տալու պարտական են: Յեղեկացըներու անհոգ եղողն անպատճառ պատժուի: — Աս բանին վրայք ստիկանպետը՝ արձանագրութիւն ունենայ, որ եթէ աստեւ մը ասանկ օտարականի մը անձին վրայ խնդիր ըլլայ՝ տեղեկութիւն կարենայ տալ: Աս արձանագրութեան մէջ ի մասնաւորի աս պարագաներն ըլլան նշանակուած. 1. Ով է, ուստի եկած է, եւ քանի հոգի են: 2. Որո՞նք թող բնակեցաւ, քանի որ, որ ամսոյն, տարւոյն մէջ: 3. Ի՞նչ բանի համար եկած է. եւ ուր կ'երթայ: — Ասոր վրայ աւելցուելու է նաեւ, որ:

7. Եթէ որ նոյն իսկ եկամուտ արհեստաւոր մարդիկ, որոնք հոս տեղաւորուիլ կ'ուզեն ու կը բաղանս իրենց արհեստը շարունակել — եւ իրենց արուեստին վրայք վկայական թղթեր ունին, առանց քաղաքաբաշտութեան ու հասարակութեան կամայք՝ ոչ տեղաւորուիլ եւ ոչ ալ իրենց արուեստը շարունակել կրնան: Ա՛ն պանդոկպետն եւ կամ՝ ան ազատ տան տերն, որուն թող ասանկ եկամուտ մը իջեւանած է, տեղեկանալով այն եկամուտին բաղանջը, հարկ է որ իրն անմիջապէս վերջ տալու կերպով ստիկանութեան առաջնորդին՝ ու ասիկայ քաղաքաբաշտութեան ծանուցանէ, վերջ յստաջ բերուած պատժին տակ:

8. Գինետուններու եւ իջեւաններու մէջ՝ ամառ, ձմեռ, առ առաւելն մինչեւ 10ը — ասկից անդին չըլլայ թէ — խմորներ, զբօսացողներ ու թուղթ խաղացողներ պահուին: Պանդոկպետն եւ իջեւան տուողն որ այսպիսիններուն աչք կը գոցէ, առանց բանի մը միտ դնելու, երեք հուսկ. ֆիրդին տուգանք վճարէ: Իսկ ստորին աստիճանի անձինք՝ անմիջապէս բանաարկուին, եւ երկրորդ օր՝ ստիկանութեան վերատեսչին բանը զեկուցում, իր արտանաւոր պատիժն ընդունելու համար: — Այսպէս վարուելու է անհնազանդ քաղաքացիներուն հետ ալ:

9. Յանպետը՝ նախազգոյշ ըլլալու է պատահելի կրակներուն առջեւն առնելու համար: Ուստի եւ ստոր հոգատարութեան նկատմամբ տանպետներուն վրայ պարտաւորութիւն կը գրուի, որ, ոչ զք՝ խոտ, յարգ, վուշ, կտակի եւ ստոր նման զիրարմառ նիւթեր ծխանին թող կամ տանիքի մէջ պահէ կամ

տեղաւորէ, 12 հունգ. ֆիրին պատժոյ տակ, որ բանն որ, եթէ տամպետին գիտութեանը հասնի, ասիկայ պարտական է անմիջապէս ուստիկանութեան վերատեսչին զեկուցանելու, յիշեալ պատժող գործադիրու համար: Ասանկ կրակի նախազգուշութեանը համար, հոգ տանի ոստիկանութիւնն, որ հասարակութեան հրշեջներն եւ ուրիշ՝ կրակ մարելու հարկաւոր բաներն ամէն տտեն լաւ վիճակի մէջ գտնուին, իրենց վերաբերեալ բաներովը:

10. Օտար մուրացիներու կամ ուրիշ շքաւորներու քաղաք գալու եւ մուրալու հրաման չկայ, հապա մուրալը միայն անոնց թոյլ տրուած է, որոնք կամ վերին կառավարութենէն եւ կամ տեղական խորհրդէն առ այս հրաման ունին: Ատր նկատմամբ վերին կառավարութիւնը 1831ին սուած է հրահանգ մը: Ուրիշ կողմանէ, իրբեւ կանոն աւուուի 1816ին տրուած կանոնադրութիւնը: Ոստիկանապետը՝ թի՛ք անձամբ ու թէ՛ փողոցաց ու քաղաքային տանապետաց ձեռք արէի վերահսկողութիւն ընելու է, որ ըսուած հրահանգին երկրորդ յօդուածն եւ անոր մէջ պարունակուած կետին համեմատ, խաբէբայ ու կնիշեալ մարդիկները կանոնի մը տակ դրուին եւ ամէն տեսակ ողորմութիւնէն զրկուին: Ա՛ն հրահանգին երրորդ կետին համեմատ, ճշմարիտ մուրացիկներն իրենց ծննդեան տեղը խրկուելու են: Չորրորդ կետին համեմատ եւ վերը յիշուած կառավարչական կարգադրութեան երկրորդ կետին հետեւութեամբ՝ բոլորովին աղքատ եւ ողորմութեան արժանի մուրացիկներուն նկատմամբ հասարակութիւնը պարտական է հոգ տանելու: Բաց ասկէ ոստիկանութեան եւ իր ներքեւն եղող տանպետներուն պարտականութիւնն է, որ տեղացի մուրացիկներն ալ — գուրս տունելով՝ զանոնք, որոնք աջատուութիւն կրնայ տրուիլ, ու որոնք միայն ուրբաթ օրերը կրնան մուրալ — երկըք տնէ տուն շքալին. մանաւանդ փողոցներու վրայ կամ եկեղեցիներու դռները մուրալու չժողուն:

11. Եւտապից եւ տեարց մէջ եղած անմիաբանութիւնը շակելը՝ այն տեղի փողոցին տանպետին գործքն ըլլալով՝ ոստիկանութեան վարիչն անոնց որոշածը՝ միայն բողոքման ճամբով կրնայ վակերացընել կամ փոխել:

12. Փողոցներուն, հրապարակին, պանգոփներուն, իջեւաններուն մէջ եւ ուրիշ հասարակաց տեղերը պատահելի կռիւներուն, բռնազրուութիւններուն եւ վէճերուն վրայ

չըջհայեցուութիւն եւ հսկողութիւն ըլլուելու է: Եւ թէ որ գործքին մէջ բռնուելու ըլլան — գուրս առնելով մեծագոյն պատիժներն, որոնք դատաստանն որոշելը քաղաքային խորհրդին գործն է — յանցանքին համեմատ մարմաւորապէս պատժուելու են: Նմանապէս անանկ մարդիկ ալ պատժոյ տակ ենմարկուելու են, որոնք փողոցներու վրայ մուրակով խռտոց կը հանեն, կը կանչուղտտեն, կ'երգեն — մանաւանդ գիշերները. եւ կամ մեծ վայնատնով իրենց տեղերը կ'երթան: — Այսպէս հասկընալու է ան օտարականներուն համար ալ, որոնք յառաջունք կը զգուշացուին, բայց հոգեբերին չէ: Ուստի եթէ ասանկ անկարգութիւն ընողները՝ փողոցի տանպետներն — որոնք իշխանութիւն տրուած չէ այսպիսի զեպքերու մէջ պատժել — ոստիկանութեան վերատեսչին կը զեկուցուին, ասիկայ՝ տանպետներն իրեն եղած զեկուցմանէն ետեւ, պատիժներն որոշուելու է: Որ, եթէ դրամական առգանք է, անոր մէկ երրորդական մասը, քարձրագոյն կառավարութեան 1830ին որոշմանը հօթներորդ կետին համեմատ, զեկուցանողին, մեկալ մասը՝ փողոցի տանպետներուն ըլլայ, իսկ երրորդ մասը՝ մուրացիկներուն հրամագրիին զարնուի:

13. Ըբացան, որոշմանակ, բանասկիէ ատրձանակ, եւահար պարպողներ՝ ըլլայ քաղքին մէջ փողոցներուն վրայ, տներուն առջեւ կամ բակերուն մէջ (հոս չհասկընալով՝ վնասակար անասուններն, ինչպէս կատաղ գուարները, վնասակար թռչուններն եւ շները՝ հարկաւոր եղած եւ վտանգ չբերող տեղերու մէջ հրացանով զարնելը) անձանց որպիսութեան համեմատ պէտք է ստրկի տուգանքով կամ բանտարգութեամբ պատժել: Նմանապէս ոստիկանութեան վերատեսչէն, ան վաճառականներն ալ պատժուելու են, որոնք աւանց մասնաւոր հրամանի գեղացիներուն, վառօր, հրացանի գնդակ ու գնդակիկ կու տան, չէ թէ մինչեւ երկը հունգ. ֆիրին տուգանքով — ինչպէս վերին, ըսուեցաւ — հապա 1807ին արընական հրամանագրին եւ նոյն տարին նաեւ կառավարչական կարգադրութեան՝ երրորդ կետին համեմատ, աւելի մեծ պատժոյ տակ ձոււելու են:

14. Եթէ որ մէկն — ըլլայ ով որ կ'ուզէ — ուրիշի մը կրտնցուցած պարանքն, ստակը՝ փողոցի կամ ուրիշ տեղւոյ վրայ, ջրի կամ ուր որ ըլլայ, թող ըլլայ, գտնելու ըլլայ եւ չբխտնայ անոր օրինաւոր տեղը՝ — ապրանքը՝

կամ դրամն ուստիկանութեան ներկայացընելու է, երբեք հոնգարական ֆիրմին պատժոյ տակ: Սակայն գտնորն՝ իրեն օրինաւոր վարձքն ընդունի: Ուստի ուստիկանութեան վերատեսուչն ալ, ան գտնուած բանն՝ անմիջապէս ուստիկանութեան ծանուցանելու պարտական է, որպէս զի ստիկայ ալ այն կորուսած ապրանքին կամ ստրկին տիրոջը նկատմամբ, հարկաւոր կարգադրութիւնն ընել կարենայ:

15. Գնչուներն եւ ասոնց պէս մարդիկ, որոնք անէ տուն սովոր են ապրանքներ ծախելու, առանց ուստիկանութեան վերատեսչին թոյլտուութեանը՝ բուն մը չեն կրնար ծախել: Այսպիսիները պարտական են ծախելի ապրանքին վրայոց վաւերացած գրուոր կահագիր մը ցուցնելու, թէ անոնք գորունի գորունի չեն, արաբփոխիկ հիւանդութեան մէջ եղող եւ անոր մէջ մեռնող անձէ Ֆացած չեն, որովհետեւ այլազգ՝ ծախելու հրաման չի կրնար արուել: Իսկ եթէ ասոր հակառակն, առանց ուստիկանութեան վերատեսչին գրաւոր հրամանին, ծախելն իրենց ապրանքները՝ փողոցի տասնպետները, նոյն միջոցին, եւ այն դէպքին մէջ միայն կրնան գրաւել, երբ որ գրաւուելն ապրանքին արժէքը 12 հունգարական ֆիրմինէն աւելի չէ: Իսկ երբ որ գրաւելի ապրանքը՝ 12 ֆիրմինէն աւելի կ'արժէ, այն ատեն, այն ապրանքները ծախող մարդուն — վերին կառավարութեան 1830ին առած հրամանագրին չորրորդ կէտին համեմատ — ուստիկանութեան վերատեսուչը վրան 12 ֆիրմին սուգանք դնէ:

16. Նմանապէս արգելելու է, որ ո՛չ վաճառականներն եւ ո՛չ ուրիշ մը, քաղքին մէջ, օտար երկրէ եկած, անծանօթ կամ գէշ անուն ունեցող եւ կասկածաւոր մարդէ՝ սասնկ ապրանք գնել չկարենայ: Չոր, եթէ գնէ, եւ այն բանը յայտնուի, այն պատժոյն տակ ձգուի, որ վերը՝ 15երորդ կէտին մէջ գրուած է:

17. Քաղքին առողջապահութեանը նկատմամբ՝ հրապարակին եւ փողոցներուն ամառքութիւնը վերջի սասիճանի վտանգաւոր ըլլալով՝ զանոնք մաքուր պահելու պարտաւորութիւնը փողոցաց տասնպետներուն գործքն է: Ուստի հարկաւոր է որ ուստիկանապետը հսկէ տասնպետաց վրայ, որ հրապարակին եւ փողոցներուն վրայ աւելածք եւ աղտոտ բաներ չցատուին: Ու որովհետեւ տասնպետներուն հրամայուած է, որ աներուն առջեւն եղած ապտոտութիւնները ժողովուն, ուստիկանութեան առաջնորդին կը ընկուցուի, որ զանոնք

անկէ տանելու կարգադրութիւն ընէ: Այն աւելածները քաղքէն անմիջապէս հեռացուելու են: Քաղքին մէջ եղած ջրի խրամները եւ ակիշներն, որոնց գոցուիլը մեծ վնաս կրնան յառաջ բերել, աւելի յաճախ մաքրել տալու է, որպէս զի ընթացքին զառա ըլլայ: Նմանապէս, երբեմն թղթատարութեան եւ առեւտրական ճամբաներուն եւ կամուրջներուն պահպանութեանը վրայ հսկելու է: Արտաքնոցներէն զուրս տարուելի աղբը, գիշեր, ու մանաւանջ ցուրտ ատեն տարուելու են իրենց որոշած տեղը՝ լաւ գոցուած եւ աղէկ շրջանակ ունեցող տակաւներու մէջ, եւ հոն գետնի մէջ թաղուի, որպէս զի մարդկութեան չկարենայ վնասել: Նոյնպէս զուրս տարուելի սասկած անասունները՝ մորթահասնէն խորունկ տեղ թաղուելու են, վեց գաւազանի հարուած պատժի տակ:

18. Թէպէտ եւ մահահատութեանց խանութներու նկատմամբ մամուււոր վերատեսուչ գրուած է, այսու ամենայնիւ ուստիկանապետն ալ անոր հետ մէկտեղ գործելով՝ աղէկ միտ գնելու է, որ առողջ զուրս մորթուի. եւ մահահատութեան խանութին մէջ միս կարելու սեղանը միշտ մաքուր ըլլայ:

19. Անոր համար է ուստիկանութիւնն իրեն ներքեւն եղած տասնպետներուն հետ, որ քաղքին ապահովութիւնն ու խաղաղութիւնն անվզող պահէ: Ուստի տասնպետներն, եթէ որեւէ փողոցի մէջ եւ կամ որեւէ տեղւոյ վրայ վայնատան ընդունք գտնեն, զանոնք՝ օգնութեան համող օրինաց մարդիկներուն օգնութեամբ՝ բռնել տալու եւ մեծագոյն յանցանքներու համար, ուստիկանութեան վերատեսչին առջեւ տանելու անփոյթ չըլլան: Ասոնց գործքն ինք ուստիկանապետը կարգի պիտի դնէ:

20. Որոշուած ըլլալով՝ որ ամէն տեսակ ուտելու բան, միայն վաճառանոց պիտի ծախուի, նախազգոյշ պիտի ըլլայ ուստիկանութիւնն, որ փողոցներու անկիւնները՝ եւս աւելի քաղքէն զուրս չըլլայ թէ թողու որ մէկն աս տեսակ բաները յառաջընէ ժողովէ կամ ժողովէ տայ եւ անկից ետքն աւելի սուղ ծախէ ու ծախել տայ: Աս հրամանին հակառակ գնուած բաները գրաւուին: Գրաւուելի կենդանի նիւթերն եւ գրաւման պատիժները՝ այս հրահանգին 15երորդ կէտին մէջ գրուածին համեմատ զործադրուին: Նոյնպէս, տունկան օրերուն մէջ աստուածային պաշտման ատեն, առնուլ տալն, ապրանքները վաճառանոց տա-

նիլը, խանութները բանալը եւ ասրանքները տեղաւորել, զետեղելը կարգելուի: Քաց ասկէ, խիստ պարտաւորութիւն կը դրուի սոսիականութեան վերատեսչին վրայ, որ թէ հրապարակին վաճառականներուն, թէ խանութպաններուն, թէ պանդոկներուն թէ ջաղացքին եւ թէ մասհատութեան մէջ գործածուած չափերուն մտադիր ըլլայ, եւ յաճախ նայի ու նայիլ տայ, որ ան չափերն ու կշիռները՝ բարձրագոյն հրամաններուն հակառակ չըլլայ թէ խորագտուին: Երկայնութեան ու խորութեան չափերն, ինչպէս նաեւ կշիռներն՝ օրինօք կնքուած նշանը պէտք է որ վստահն ունենան: Աս հրամանին դէմ ընդդէմն եւ աս ճշմարիտ չափին ու կշիռին դէմ գործողները, քաղաքաբաշխութեան՝ արդէն շատնջ տուած կարգադրութեանը համեմատ, չէ թէ միայն 12 ֆիրդին տուգանօք պիտի պատժուին, հապա նաեւ այն գէշ ու խորգախ կշիռն ու չափն իրենցմէ առնելով՝ փնջափ անգամ (toties quoties) պիտի պատժուին, որչափ անգամ որ այն բանին դէմ ընեն: — Ու որովհետեւ խակ պտուղներն առողջութեան կը փնտան, այսպիսի բաները ծախելը խտրու կ'արգելուի: — Քեպէս հացադոծներուն համար մասնաւոր վերահսկող մը գրուեցաւ, դոյսու ամենայնիւ, սոսիկանութիւնը հակէ, որ վերնագոյն կարգադրութեան համեմատ որչափ օրինաւոր չափը պահուի: Դարձեալ՝

21. Հատ փնտանք կ'ընեն այն կենդանիներն ալ, որոնք փողոցներուն եւ հրապարակին մէջ կամ խորելով կամ աղտոտելով եւ կամ ուրիշ փնտանք ընելով զմարդիկն անհասնգիստ կ'ընեն — օրինակի աղաքա՝ հորթները, խոզերը եւ կամ շատերուն՝ գիշերը, վզերնին զանգակի կրող դուարները - զորոնք ամէն տան տէր, կամ հօտը զնելու եւ կամ տունը՝ ախտի մէջ զնել պահելու է վասն զի, այլազգ, պիտի բնուուին ու թէ հօտի վարձքը եւ թէ պատճառած փնտանքը, տէրը պիտի հատուցանէ: Ուր թողուք, որ ասոնց պատճառած դժբախտութեան համար, անասնոյն տէրը պատասխանատու է:

22. Քաղքին մէջ շներու բազմութիւնը, չէ թէ միայն վտանգաւոր եւ վախնալու բան է, հապա նաեւ իրենց հաջելովը, մեկտեղ ժողովուելովը, մանաւանդ գիշերները՝ ամենուն, բայց ի մասնաւորի հիւանդաց, ուսանողաց եւ գործող պաշտօնատէրաց շատ անհանգստութիւն կը պատճառեն: Ուստի առաջեկայովս, անանկ

կարգադրութիւն կը դրուի, որ փողոցներուն վրայ գտնուող անտերունջ եւ թափառող շները (գուրս առնելով՝՝ հետախոյզ եւ որսի շները) սպանուին: Հուն պահել ուղղին, անոր ալ միտ դնէ, որ անիկայ առանձինն, առանց իր տիրոջն, ասդին անդին չերթայ, չթափառի:

23. Սոսիկանութեան վերատեսչուք՝ թէ իրեն առջեւը դրուած ու թէ տասնպետներուն տուած հրահանգին կետերը՝ ճշգիւ պահէ ու պահել տայ: Ու եթէ որ տեսնէ թէ մէկ կամ մէկալ տասնպետն իր պաշտօնն ըստ խղճի չէ կատարեր եւ առջեւը դրուած կարգադրութիւնները չի պահեր, ասանկ անհնազանդ ու իր պաշտօնին չհամապատասխանող տուսակները՝ քաղաքային խորհրդին զեկուցանելու է:

24. Եթէ որ որեւիցէ տեսակ պարտքի վերաբերեալ խնդիրներ սոսիկանութեան վերատեսչին առջեւը գան, զգուշանայ, որ զանոնք լսած ու ընդունած ատեն, օրինաւոր դատատանին ընթացքը չփնտուի: Զգուշանայ նոյնպէս, որ տասնպետները փոքրագոյն պարտքերուն նկատմամբ եղած որոշմունքները չգործադրեն, եւ ըստ կամի տուգանքներ զնեղէն արգելուին:

25. Որովհետեւ տասնպետներուն գլխաւոր պարտքն է, աս ծանուցագրին մէջ, ինչպէս նաեւ հասարակաց սպահովութեան, կանոնապահութեան եւ մաքրութեան նկատմամբ որոշուած կետերուն պահպանութեանը վրայ հակել եւ ասոր դէմ ընդդէմն զգուշացնել եւ պատժել — ուստի ամէն տասնպետ՝ իր առաջնորդներուն հետ յարգութեամբ վարուի, որովհետեւ թաղի առաջնորդին հետ անպատշաճ կերպով վարուող անձն՝ եթէ պաշտօնատէր է, իր առաջնորդին պիտի զեկուցուի, իսկ եթէ քաղաքացի եւ հասարակ բնակիչ է, իր արժանեացը համեմատ դրամով կամ բանտարգելութեամբ եւ գաւազանահարութեամբ պիտի պատժուի սոսիկանութեան առաջնորդէն:

ՅՈՒՆ. ԱՆԾԻՍ

